ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-17-37, aralezgg@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 19-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով .

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է `

Եկամտային մաս

<<Գույքահարկ փոխադրամիջոցներից >> ավելացնել1332.0 հազար դրամ: Ճշտված պլանը սահմանել 7111.0 հազար դրամ:

Ծախսային մաս

1.<<Կառավարման մարմնի պահպանում>> /01.01.01.51/

4111 հոդվածի պլանը պակասեցնել 100.0 դրամով ճշտված պլանը սահմանել 22037.0 հազար դրամ:

4212 հոդվածի պլանը պակասեցնել 310.0 դրամով, ճշտված պլանը սահմանել 705.0 հազար դրամ,

4214 հոդվածի պլանը պակասեցնել 40.0դրամով, ճշտված պլանը սահմանել 320.0 հազար դրամ

4215 հոդվածի պլանը պակասեցնել 10.8 դրամով ճշտված պլանը սահմանել 39.2 հազար դրամ:

4232 հոդվածի պլանը պակասեցնել 37.0 դրամով ճշտված պլանը սահմանել 213.0 հազար դրամ:

4234 հոդվածի պլանը պակասեցնել 51.0 դրամով ճշտված պլանը սահմանել 199.0 հազար դրամ:

4239 հոդվածի պլանը պակասեցնել 15.0 դրամով ճշտված պլանը սահմանել 877.0 հազար դրամ:

4822 հոդվածի պլանը պակասեցնել 18.9 դրամով ճշտված պլանը սահմանել 31.1 հազար դրամ:

2.<<Սոց հատուկ արտոնություններ>> /10.07.01.51/

4726 հոդվածի պլանը պակասեցնել 335.0 հազար դրամով, ճշտված պլանը

սահմանել 665.0 հազար դրամ:

3.<<Հասարակական կազմակերպություններին աջակցություն>> /10.07.01.55/ 4819 հոդվածի պլանը պակասեցնել 60.. հազա դրամով, ճշտված պլանը սահմանել 340.0 հազար դրամ:

Ավելացում

1.<<Հանգիստ մշակույթ կրոն>> /այլ դասեր/ /08.05.01.55/ ծրագրի 4239 հոդվածի պլանը ավելացնել 999,7 հազար դրամով ճշտված պլանը սահմանել 2999.7 հազար դրամ:

4269 հոդվածի պլանը ավելացնել 1000.0 հազար դրամով ճշտված պլանը սահմանել 4234.8 հազար դրամ:

2.<< Սոց հատուկ արտոնություններ>> /10.07.01.51/ ծրագրի 4729 հոդվածի պլանը ավելացնել 110.0 հազար դրամով ճշտված պլանը սահմանել 3110.0 հազար դրամ:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -5

1. ԱՆԴՐԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ՀԵՆՉԵԼ
3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
4. ՇԱՄԻՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՀԱԳՆ

Համայնքի ղեկավար՝ ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԼԵԶ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արալեզ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Արալեզ, 6-17-37, aralezgg@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 18-Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման>> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Համայնքի վարչական տարածքում 2016թ.-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի շինությունների (ներառյալ՝ոչ հիմնական) շինարարության(տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1)մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 10000դրամ:

2)սույն կետի <<1>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

2)1 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000դրամ,

2)2 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝12000դրամ,

2)3 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝15000դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3)մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000դրամ,

4) 20 և ավեի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյելտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման

աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքների գործառական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ:
2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքների գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի <<1)>> ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքների գործառական նշանակության փոփոխության մասով.
3) Նախատեսվում է միայն կցակառույցների վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1000 դրամ:
4. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը կիրառվում են 0,5 գործակցով:
5. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ.-ի տեղական տուրքը սահմանել՝
ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ,
բ/ թունդ ալկոհոլային /20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ,
գ/այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ:
6.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ.
2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000 դրամ:
7.Համայնքի տարածքում՝
1)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության 1քմ-ի համար տեղական տուրք սահմանել 250 դրամ,
2)<<Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների>>, վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 170000 դրամ:
8.Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, զվարճանքի օբյեկտների՝ ժամը 24:00- ից աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա/ առևտրի օբյեկտների համար- 50000 դրամ,
բ/ խաղատների համար - 500000 դրամ,
գ/ շահումներով խաղերի կազմակերպման համար- 250000 դրամ,
դ/ բաղնիքների /սաունաների/ համար -200000 դրամ,
ե/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար-50000 դրամ,

զ/ խանութներում և կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 30000 դրամ:
9.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակները տրամադրելու տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 դրամ:
10.Համայնքային տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 դրամ:
11.Համայքի տարածքում աճուրդ - մրցույթին մասնակցության համար տեղական վճար սահմանել 1000 դրամ:
12. Համայնքի տարածքում աղբահանության համար 1 շնչի դրույքաչափը 150դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ՀԵՆԶԵԼ
3. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ
4. ՇԱՄԻՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՀԱԳՆ

Համայնքի ղեկավար՝ ՄԱՐՏԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ